№ 209 ՀՈՒՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24 — 1908 — ՀՈՒՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24 № 209

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
ՏԷԼԷՖՈՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
ՏԷԼԷՖՈՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԱՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 3 ՌՈՒԲ.

Ամսական Մէկ ռուբլի

Ամերիկա տարեկան	6 դոլլար
Եւրոպա »	30 ֆրանկ
Պարսկաստան »	10 ռուբլի
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել	40 կոպ.

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Խորհուրդը

պատիւ ունի յայտնելու ընկերութեան ժեծարգոյ անդամներին, որ շաբաթ, սեպտեմբերի 24-ին, երեկոյեան ժամը 7-ին, Թիֆլիսի Բօրսայի դահլիճում նշանակված է

ԵՐԿՐՈՐԴ ԱՐՏԱԿԱՐԳ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Հրաւիրանքի առարկաներն են.

1) Ընկերութեան միջոցներով նպաստվելիք դպրոցների ծախսերը և նախահաշիւի հաստատելը։

2) Ընդհանուր ժողովի թոյլատրութիւնը ծախսելու թիւրքահայ գաղթականների անուամբ եղած 2000 ռուբլին՝ նրանց հայրենիք վերադառնալու համար։

3) Ճիւղերի նախահաշիւների հաստատումը։

4) Վերաստուգիչ յանձնաժողովի երեք անդամների և երկու փոխանդամների ընտրութիւնը։

Ժողովը օրինաւոր կը համարվի անկախ ներկայ եղող անդամների թուից։

Կողմնակի մարդկանց մուտքը ազատ է, միայն առանց մասնակցելու. ժողովին։

(կ. ե. չ.) առ. 3—3

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

БАКУ, уголъ Красноводск. и Меркурьевск. телеф. № 10—56

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական և առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշուապահներ։ Ուսուցողները ստանում են ատեստատներ։

Կուրսերում ուսանվում են՝ 1) Առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն հաշիւի վրա. 2) Հաշուապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Դեղագրութիւն և արագագրութիւն (ուղղագիր ձեռագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա։

Ցանկացողների համար՝ առանձին վճարով լեզուներ և ատենագրաֆիա։

Ուսումն սկսվելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայն օր կուրսերում, առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը։

ԿՈՒՐՍԵՐ ՄՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՑՎԱԾ Է ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆ

Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և ժամերաչափը (программа) տրվում և ուղարկվում են ՁՐԻԱԲԱՐ։ Օտարաքաղաքացիները դիմում են Баку, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову.

(առ.) (չ. կ.) 20—19

ա. (կ.չ.) 16—15

Ս. Էջմիածնի Սինոդի համար
Հարկաւոր է
ՄԻ ՀՄՈՒՏ ՀԱՇԻԱՊԱՀ,
որը կարողանայ վարել գործերը հայոց լեզուով։
Պայմանների մասին դիմել ս. Սինոդին։
(առ.) 3—2

ՁՈՒԹԱԿԱՀԱՐ
Դ. Դաւթեան
հաստատվում է Թիֆլիսում և տալիս է ջութակահարութեան դասեր։
Դիմել՝ Музыкальн. магазинъ Сузанаджяна
(ու. կ. չ.) առ. 15—11

ԲՕԼԳԱՐԻԱՆ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹԻՒՆ

Հեռագիրները քաղաքական մի կարևոր նորութիւն հաղորդեցին. Բօլգարիան հրատարակված է անկախ թագաւորութիւն։

Այս կարևոր դէպքի ամբողջ մեծութիւնը նկատվում է և մի այլ հեռագրից, Կ. Պոլսից, որ հաղորդում է, թէ այդ դէպքը պատերազմ առաջ չի բերի և թէ Կ. Պոլսում կազմվում է մի զօրեղ զինուորական կուսակցութիւն։ Ուրեմն, այդ դէպքի առաջին և ընդհանուր տպաւորութիւնն այն է եղել քաղաքական շրջաններում, որ պատերազմ կարող է ծագել։

Բացատրենք այդ նշանաւոր քաղաքական դէպքը առաջ բերող նախընթաց բոլոր դէպքերը։

Բերլինի կոնգրէսի դաշնադրութեան զօրութեամբ Բօլգարիային թէև տրվեց ազատութիւն, բայց նա հրատարակվեց վասսալ իշխանութիւն, այսինքն մի իշխանութիւն, որին տրված է ինքնավարութիւն, ունի իր սեփական կառավարութիւնը, բայց քաղաքականապէս պէտք է վասսալ լինի Թիւրքաց սուլթանին և տարեկան որոշ հարկ վճարէ Թիւրքիային։ Ուրեմն, Բերլինի դաշնագրի զօրութեամբ, Բօլգարիան ոչ թէ մի անկախ պետութիւն է, այլ մի առանձնաշնորհեալ և ինքնավար, բայց և վասսալ երկիր։

Սակայն Բօլգարիան հէնց սկզբից աշխատեց թօթափել իրանից սուլթանական անարդ լծի վերջին մնացորդները, թօթափել իրանից վասսալական կախումն, վճարել տարեկան տուրքը։ Եւ իրողապէս նա հասաւ իր նպատակին. նախ՝ նա միացրեց իր հետ Արեւելեան Ռումէլիան, երկրորդ՝ նա դադարեց հարկ վճարել, երրորդ՝ նա սկսեց մուս պետութիւնների հետ ինքնուրոյն կերպով զանազան դաշնագրեր, առևտրական և այլ, կնքել և դրանով հանդէս գալ քաղաքական ասպարէզում իբրև անկախ, ինքնուրոյն մի պետութիւն։ Եւ Բերլինի դաշնագիրը ստորագրող եւրոպական մեծ պետութիւնները հաւանութիւն տալով Բօլգարիայի այդ քայլերին՝ լռելեայն ճանաչեցին նրա անկախութիւնը, որ, արդէն իբրև կատարված իրողութիւն, սպասում էր աջող դէպքի պաշտօնապէս հրատարակվելու։

Երբ հրատարակվեց Թիւրքական սահմանադրութիւնը, մեծ վեզիր Քեամիլ փաշան, կամենալով, անշուշտ ժէօն-Թիւրքերի համաձայնութեամբ, յիշեցնել Բօլգարիային իր վասսալական պարտականութիւնները, օգտվեց մի առիթից և իր տուած դիպլոմատիական հացկերոյթին չը հրաւիրեց Բօլգարիայի դիպլոմատիական գործակալ Գէշովին, կամենալով դրանով ցոյց տալ, թէ Բօլգարիան անկախ մի պետութիւն չէ, այլ վասսալ։ Բօլգարական կառավարութիւնը յետ կանչեց իր գործակալին, և բօլգարական ժողովուրդը իրան վիրաւորված համարեց ու բուռն տրամադրութիւն ցոյց տուեց բաւարարութիւն պահանջելու Թիւրքիայից այդ վիրաւորանքի համար։

Ապա տեղի ունեցաւ մի այլ միջադէպ. Բօլգարական կառավարութիւնը գրաւեց արևելեան երկաթուղիների մի մասը և այդ միջադէպը ևս սաստիկ կերպով սրեց յարաբերութիւնները Թիւրքիայի և Բօլգարիայի միջև։

Եւ ահա Բօլգարիան այդ դէպքերը շատ յարմար առիթ նկատեց, երևի, իր վաղուց փայփայած և զուրգուրած միտքը—հրատարակել իրան անկախ պետութիւն—իրագործելու։

Իսկապէս, այդ դէպքը, այն է՝ Բօլգարիայի անկախ թագաւորութիւն դառնալը, ոչ մի վնաս չէ կարող ունենալ Թիւրքիայի համար, քանի որ, իրողապէս, Բօլգարիան վաղուց չունէր վասսալական յարաբերութիւններ, չէր վճարում տուրք և պահում էր իրան անկախ ու ազատ։ Այդ ակտով նուիրագործվեց պաշտօնապէս միայն այն, ինչ որ վաղուց կատարված իրողութիւն էր և գոյութիւն ունէր։

Հէնց այդ հանգամանքը առիթ է տալիս յուսալու, որ այդ դէպքը առաջ չի բերի պատերազմ, մանաւանդ այժմ, երբ Թիւրքիան պէտք ունէ իր վերածնութեան համար խաղաղութեան և անդորրութեան։ Ի հարկէ, քաղաքակիրթ մարդկութեան համակրութիւնը Բօլգարիայի կողմը պէտք է լինի, որովհետև նրա ձգտումը—թօթափել իրանից Թիւրքական լծի վերջին մնացորդները—համապատասխանում է նրա ազգային և պատմական շահերին, և Բօլգարիան արժանի է՝ որ լինի մի բոլորովին անկախ պետութիւն քաղաքակիրթ պետութիւնների շարքում։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Սոֆիա, 22 սեպտեմբերի

Երէկ երեկոյեան իշխան Ֆերդինանդը ժամանեց Ռուշչուկ, ուր ընդունվեց մինիստրների կաբինետից, որ եկել էր ամբողջ կազմով։ Այսօր առաւօտեան իշխանը մինիստրների ուղեկցութեամբ արտակարգ գնացքով մեկնեց Տիրնօվօ։ («Հ. Գ.»)

—

Սոֆիա, 22 սեպտեմբերի

Տիրնօվօյում այսօր Բօլգարիան յայտարարվել է անկախ թագաւորութիւն։ («Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս, 22 սեպտեմբերի

Տեղական շրջաններում հաւատացնում են, որ պատերազմ չի լինի։ Ըստ երևոյթին, կազմակերպվում է զինուորական ուժեղ կուսակցութիւն։ Առայժմ ամեն ինչ հանդիստ է։ («Հ. Գ.»)

—

Վիէննա, 22 սեպտեմբերի

«Pol. Cor.»-ին Սոֆիայից հաղորդում են.

Տեղական դիպլոմատիական շրջաններում Կ. Պոլսից արժանահաւատ տեղեկութիւններ են ստացվել, որոնցից երևում է, որ Բ. Դուռը համաձայն չէ կանոնաւորել Գէշովի միջադէպը Բօլգարիայի համար ցանկալի ոգով. Բօլգարիայի ներկայացուցիչը ապագայում, համապատասխան դէպքերում, կը հրաւիրվի նոյն հիմունքներով, ինչպէս ինքնուրոյն պետութիւնների դիպլոմատիական ներկայացուցիչները։ Հարցի վերջնական լուծման համար միակ արգելարիթ հանդիսանում է Բ. Դրան մերժումը՝ պարզել իր դիրքը գրաւոր կերպով. այնուամենայնիւ այս ժամիկ օրերս սպասվում է, որ հարցը լուծում կըստանայ դրական մտքով։ («Հ. Գ.»)

—

Լոնդոն, 22 սեպտեմբերի

Երեկոյեան լրագիրները մատնանիշ են անում ներկայ ըսպէի լրջութեան վրա. Աւստրիայի ընթացքը անուանում են արհեստական, սակայն նրան բարոյական չեն գտնում, շեշտելով որ միևնոյնն է՝ Բոսնիան և Հերցեգովինան կը կոչվեն կայսերական և թագաւորական տիրապետութիւն, կամ այլ կերպ՝ միևնոյնն է—գործնականապէս դա յափշտակութիւն կը լինի։ («Հ. Գ.»)

—

Լոնդոն, 22 սեպտեմբերի

Բէյտերի գործակալութեան տեղեկութիւնների համաձայն, Մեծ-Բրիտանիան առաջարկութիւն է արել Թիւրքիային և Բօլգարիային երկաթուղային հարցը լուծելու նպատակով. Թիւրքաց կառավարութիւնը պատրաստակամութիւն յայտնեց համաձայնել այն դէպքում, եթէ գիծը ժամանակաւորապէս կը վերադարձվի ընկերութեան, որպէսզի Բ. Դրան իրաւունքները պատշաճ կերպով պահպանված լինեն։ Մեծ-Բրիտանիան դիմեց Բերլինի դաշնադրութիւնն ստորագրող պետութիւններին, խնդրելով հարցի լուծումը յանձնել Բօլգարիային։ Լուրերին նայած՝ մեծ պետութիւնները այդ բանին համակրանքով են վերաբերում։ («Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս, 22 սեպտեմբերի

Զինուորական մինիստրի կարգադրութեամբ, Պլէվլէի զօրքի հրամանատար, նախկին սիւրթէսարբֆ Սուլէյման-փաշան մուտ է առայժմ Սալօնիկում։ Մօտիկ ապագայում նա կը ստանայ աւելի բարձր պաշտօն։ Գնդապետ Զէկաթը, որ սկզբում հրաժարվեց ստանձնել Սուլէյման-փաշայի պաշտօնը, այժմ համաձայնել է և կը նշանակվի բրիգադայի գեներալ։ («Հ. Գ.»)

—

Դրէզդէն, 22 սեպտեմբերի

Վիէննայից եկաւ Ալֆոնս թագաւորը և կայսրանում ընդունվեց թագաւորից և բարձրաստիճան քաղաքացիական ու զինուորական պաշտօնեաներից։ («Հ. Գ.»)

—

Պարիզ, 22 սեպտեմբերի

Պիշօնը առաւօտեան ժամը 10-ին ընդունեց մինիստր Իզվոլսկուն, իսկ ժամը 11-ին նստում-փաշային. ցերեկով կընդունէ բրիտանական և ամերիկական դեսպաններին. վաղը առաւօտեան՝ բօլգարական դիպլոմատիական գործակալին։ («Հ. Գ.»)

—

Նիւ-Եորկ, 22 սեպտեմբերի

Վենէցուէլայից հաղորդում են, որ նախագահ Կաստրոն սենատի նիստում յայտնեց, որ չէ ընդունում Հոլլանդիայի երկրորդ նոտան։ Ճառելիս Կաստրոն անակնկալ արիւնհոսութեան պատճառով ընկաւ անզգայ դրութեան մէջ։ («Հ. Գ.»)

—

Մեց, 22 սեպտեմբերի

Նուազվիլի ստամ, 65,000 մարդու ներկայութեամբ, բացվեց 1870 թ. պատերազմում ընկած ֆրանսիացի զինուորականների յիշատակին կառուցված արձանը։ Հանդիսին ներկայ էին գնդապետ Օլիվիէն իբրև ֆրանսիական կառավարութեան ներկայացուցիչ և ֆրանսիացի 25 օֆիցէրներ։ Ներկայ էին նաև պատգամաւորութիւններ գերմանական գնդերի կողմից ու Մեցի զինուորական և քաղաքացիական իշխանութիւնների ներկայացուցիչը։ Զինական եկեղեցու պատարագը աւարտելուց յետոյ, նահանգի նախագահ կոմս Ցեպպէլինը արձանը ընդունեց կառավարութեան հովանաւորութեան ներքոյ և մի ճառ արտասանեց, որով, յարգելով ընկածների յիշատակը, յոյս յայտնեց, որ ֆրանսիացիները և գերմանացիները փոխադարձ յարգանքով և հանգստութեամբ կը պահպանեն բարեացակամ յարաբերութիւններ։ Կոմս Ցեպպէլինը պսակ դրեց կառավարութեան անունից։ («Հ. Գ.»)

—

Թէհրան, 22 սեպտեմբերի

Անգլիական դեսպան Բարկլային շահին յանձնեց իր հաւատարմագրերը։ («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 22 սեպտեմբերի

Ի պատասխանի Պետերբուրգի համալսարանի խորհրդի առաջադրութեան՝ ժողովրդական լուսաւորութեան մինիստրի կողմից հետևեց այս առաջարկութիւնը.

«Քննելով Պետերբուրգի համալսարանի խորհրդի առաջադրութիւնը, որով միջնորդվում է թոյլատրել ժամանակաւորապէս պարապմունքները դադարեցնել այդ համալսարանում, խորհրդի շարժառիթները պակասաւոր եմ գտնում ընդունելու նրա առաջարկած միջոցը, ուստի և առաջարկում եմ բոլոր պ. պ. պրոֆէսօրներին և դասատուներին՝ շարունակել դասախօսութիւնների ընթերցումը և միւս կրթական պարապմունքները ուսանողների հետ. իսկ խորհուրդը, համաձայն 1905 թ. օգ. 27-ի ուկազի 2-րդ յօդուածի, պէտք է ամեն միջոց գործ դնէ, որպէսզի ցանկացող ուսանողները հնարաւորութիւն ունենան շարունակել իրանց աշխատանքները։

«Ընդսմին վերստին երկրորդում եմ, որ իմ կարգադրութիւնները, որոնք վերաբերում են համալսարանների գործունէութեան մի քանի կողմերին, բնաւ չեն պարունակում իրանց մէջ որևէ սահմանափակումն այն իրաւունքների, որ շնորհված են համալսարաններին 1905 թ. օգ. 27-ի բարձրագոյն ուկազով և 1907 թ. յուլ. 11-ի բարձրագոյնս հաստատված կանոններով։ Սիրում եմ հաւատալ, որ խորհուրդը կը բացատրէ ուսանողներին ինչպէս այս հարցը, այնպէս և այն, որ ներկայումս նրանց յուզող ակադեմիական կեանքի բոլոր հարցերը պէտք է քննութեան նիւթ դառնան օրէնսդրական հաստատութիւնների մէջ՝ համալսարանական նոր կանոնադրութեան նախագիծը քննելու ժամանակ և նոյն

հաստատութիւններում պէտք է ստանան իրանց լուծումը»։ («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 22 սեպտեմբերի

Ցերեկվայ ժամը 5-ին, զինուորական վարչութեան խողովակներ պատրաստող գործարանում, Վասիլէվսկի կղզում, պայթում առաջացաւ։ Հինգ բանւոր ստացան մահացու վէրքեր, եօթ հոգի վիրաւորվեցին թեթև կերպով։ («Հ. Գ.»)

—

Էջմիածին, 23 սեպտ. 4 ժ. 52 ր. ցեր.

Սինոդի անդամներ հաստատված են՝ Սուքիաս արքեպիսկոպոսը և Ամատունի, Մաւսրոպ և Մատթէոս վարդապետները։

—

Բեվէլ, 22 սեպտեմբերի

Ուժեղ փոթորիկը մի շարք աւերածութիւններ գործեց։ Մի բանի նաւեր ծովի վրա ջրասոյզ եղան։

(«Հ. Գ.»)

—

Տաշկենդ, 22 սեպտեմբերի

Տաշկենդի և Զարջոյի միջև պօստային գնացքում երևան են հանել 330,000 ռուբլու կորուստ։ Ձերբակալված են պօստային երկու պաշտօնեաներ։ («Հ. Գ.»)

—

Սուխումից գրում են. «Սեպտեմբերի 18-ին Սուխումի շրջանի կառավարչի դիւանատան գործավար Պետրիչկինը, կեղծ ընկալագրեր շինելով շրջանային վարչութեան անունով, պետական գանձատնից ստացաւ 38,600 ռուբլի և անյայտացաւ յայտնի չէ ուր։ Բաթումում, ծովի ափին, ինչ-որ նաւաստի գտել է նրա կօստիւմը և տարել ոստիկանատուն, այն հաւատով, թէ դա խեղդվածի կօստիւմն է։ Գրպանում գտնվել է մի նամակ Սուխումի բաժնի պրիստաւ Օլէնիկովի անունով, որի մէջ շնորհակալութիւն է յայտնում նրան ինչ որ աշակցութեան համար։ Այդ նամակով նա յայտնում է, որ նա կեղծ թղթերով պետական գանձատից ստացել է 38,600 ռ.։ Այժմ պարզվում է, որ նա իւրացրել է և մանաւոր փողեր, որ նոյնպէս ստացել է գանձատնից կեղծութեամբ։ Գեղծիքները այնպէս լաւ էին կատարված, որ երկու քննութիւնները չը կարողացան պարզել այդ»։

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

(Մեփ. թղթ.)

—

Կ. Պոլիս, 12 սեպտեմբեր

Պալատի վրայ մէջտ կասկածներ կան, թէ արթուն կը հսկէ ան։ Ասիկա ընաւ տարակուսելի չէ, մանաւանդ շատ բնական կը գտնենք, որ ան ինքը պատրաստ ըլլայ իր կորսնցուցած ազատութիւնը ձեռք բերելու՝ երկրի ազատութիւնը կուլ տալով։ Այդ կասկածներուն մէջ ինչ որ անկասկածելի է՝ սա է թէ ալբանացի և արաբ զօրագունդերը, անոնք որ կը շրջապատեն սուլթանին արքունիքը, երդուած են իրենց խալիֆային գլուխովը՝ ցկեանս հաւատարիմ մնալու ոգի ի բուին պաշտպանելով անոր գոյութիւնը։ Զինուորներու մէջ դաւադրութիւն սարքելու հնարաւորութիւն չկայ, վասն զի ալբանացի և արաբ սօլդատները իրարու լեզուն բնաւ չեն հասկնար և հէնց այդ միակ առաւելութիւնն է, որ գնահատուած է պալատին մէջ, և սա է, որ հաւասարակշիռ կը պահէ ժեքենական խաղաղութիւնը կասկածի, վախի, սարսափի և զարհուրանքի այդ վայրերուն մէջ։

Երկու օրէն կը մտնենք բամազան, իսլամական կրօնքի մեծ պահքի օրեր։ Այժմէն կարգ մը բաներ կը խօսուին։ Կարևորը զաղտնիքներ կը պարունակէ, այնուամենայնիւ մեծ ընդունելութիւն գտաւ տեղս, և տարակոյս չունիմ որ միևնոյն համակրանքին պէտի արժանանայ նաև մեր հայկական մամուլին։

Գիտեմ թէ առարկելի կէտեր կան հոն, օրինակի համար, և գլխաւորաբար, զայն սուլթանին ուղղելը, բայց սահմանադրական երկիրներու մէջ օրէնք է, որ, երբ երկրի մը ժողովրդին շնորհաւորում մը ուղղես, այդ կըլլայ իր պետին միջոցաւ։ Հետևաբար Էդուարդ թագաւորը իր շնորհաւորութիւնը չէր կրնար ուղղել օսմանեան կօմիտէին։ Ուրիշ կէտ մը։ Հեռագրին մէջ յիշատակուած էր, թէ «ապագայ սերունդը յարգանքով պիտի յիշէ ձերդ վեհափառութեան այս մեծ գործը», այսինքն սահմանադրութեան շնորհումը։ Ոմանք սա աւելորդ նկատած են, և նոյնիսկ ազատ եկեղեցւոյ խորհրդի նախագահը (և հոս փակագծի մէջ յայտնեմ, որ Անգլիոյ կրօնական այս հաստատածն է որ տարիներ շարունակ միթինգներ սարքած և հազարաւոր ոսկիներ հաւաքած է հայոց ի նպաստ) ինտերվիուի մը ըսաւ, որ թէև իր խորհուրդը սիրով կողջունէ յիշեալ հեռագրին ուղղումը սուլթանին, սակայն կը տարակուսի թէ ապագայ սերունդը ուէ ձևի տակ պիտի օրհնէ կամ յարգանքով յիշէ մէկու մը անունը՝ որ հայկական կոտորածներու անմիջական կարգադրիչն էր և անձնապէս կը հսկէր մարդադրիչն էր և անձնապէս կը հսկէր մարդկային այդ հսկայ ու զարհուրելի հէկատոմբը։

Բայց ինչ կարելի է ընել։ Ասոնք «դիւանագիտական» կապկութիւններ են, որոնք պէտք է յարգել, ու կրկին կը շնորհաւորենք Անգլիոյ ազատական կառավարութիւնը, որ, քիչ մը իր շահերը նկատի ունենալով, և առաւելապէս ի խրախոյս նոր ազատագրեալ Թիւրքիայի, քաջութիւնը ունեցաւ յիշեալ հեռագիրը ուղղել իր վեհապետին միջոցով, ցոյց տալով որ իրենք իսկապէս բարեկամ և փափաքող են ազատ օսմանեան կայսրութեան մը ստեղծման։ Ես չեմ ուրանար, որ Անգլիան իր անհատական շահերը անտեսած չէ այդ հեռագիրը ուղղած պահուն, մանաւանդ որ այժմ մահմեդական հզօր և ազատ կայսրութեան մը ստեղծումով՝ ոեէ անհաճոյ ընթացք Անգլիայէ—որու վեհապետը սուլթանի չափ մահմեդական հպատակներ կը կառավարէ—կրնայ անակնկալ կնճռոտութիւններ երևան հանել։ Բայց, այս բոլորին հետ մէկտեղ, վերոյիշեալ հեռագիրը մօտէն քննող մը պիտի նշմարէ, որ սա ամենակծու, այլ քաղաքավարի, ազատակն է, որ տրուած է մեծ մարդասպանին անհատապէս։ Այո, այդ հեռագիրը անզուգականօրէն խմբագրուած հատուած մըն էր, և մենք շատ շատ աւելի թունդ հակառակորդներ գոհ ձգեց։

Անգլիոյ ազատական դահլիճին առաջին քայլէն արտայայտած վերապահ և համակրական դիտողի դիրքը յիրաւի արժան է յարգանքի։ Այնպէս պատահեցաւ, որ սահմանադրութեան հռչակման յաշորդ օրը, պարլամենտին մէջ հարց պիտի տրուէր մակեդոնական և հայկական խնդրոց վերաբերմամբ, և արժատական անդամ մը, յոռետես և յուսահատ ու դժնդակ պատկեր մը գծելով կացութեան վրայ, աւելցուց, թէ սուլթան նոր խաղ մը խաղալ կուզէ՝ այս անդամ ալ սահմանադրութիւն մը փչելով դուրսինները աչքին, որպէս զի աւելի ճարտարօրէն վարէ կրկին իր հրէշային արարքները։

Ասոր վրայ սըր Էդուըրդ Գրէյ, արտասանել

ՇԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

—

«Գործակալները» շարունակում են մամուլի բարքերի փչացման գործը, որին այնքան մեծ եռանդով ծառայում էին նախկին փողոցային թերթեր «Հայաստան», «Զանգակը» և այլն։

Կաթողիկոսական հարցի մէջ նրանք ուղղակի սովորական միջոցներ են դարձրել մեզ դէմ կուռելու համար ստութիւնը, խարդախութիւնը, լրտեսութիւնը, փաստերի ուրացումը։ Մի օր յայտարարում էին թէ «Հայկականները այս ինչ տեղ ժողովներ են կազմել (խուզարկութեան, լրտեսութեան արհեստին բաւական հմտացած են). մի այլ օր տարածում էին, թէ «Հայկականները բլոկ են կազմել օրմանեանականների հետ, գաղտնի կերպով առաջ մղելու Օրմանեանի թեկնածութիւնը։ Այժմ էլ Թիֆլիսի և Ղարաբաղի թեմերի պատգամաւորի ընտրութեան առիթով նրանք դիմել են մի ամենատոր, կեղտոտ միջոցի, որից ուղղակի աղբանոցի հոտ է փչում. մամուլը նրանք դարձրել են ուղղակի աղբանոց, ուր զանազան թռփչեանները իրանց շատ լաւ և լաւ են զգում։

Այդպիսի կեղտոտութեան մի նմուշ է ներկայացնում այն պասկվիլը, որ «Գործը» տպել է իր երէկվայ համարում,—մի նամակ՝ գրված որպէս թէ բժշկապետ Կ. Ստեփանեանի կողմից մեր լրագրի խմբագիր Ալ. Քալանթարին։

Այդ նամակի ամէն մի տառը ստութիւն է և անամօթ կեղծիք։

Ուստի ես պարտ եմ համարում մի քանի բացատրութիւն տալ ընթերցող հասարակութեան ստախօսների դիմակը պատռելու համար։

«Գործակալները» սաստիկ ահ ու դողի մէջ էին, որ չը լինի Ղարաբաղի թեմը ինձ ընտրէ պատգամաւոր, ուստի և սկսեցին յորդոր կարդալ այդ թեմի պատուիրակներին, որ ձայն չը տան ինձ։ Ընտրութեան օրը յայտնվեց, որ «գործակալների» բանակ կազմող թայֆայականները իրանց թեկնածու են ընտրել պ. Լէօին։ Եւ սա կայն, Ղարաբաղի թեմը, չանաց նրանց յորդորներին և ես ընտրվեցի Ղարաբաղի թեմի պատգամաւոր. իսկ նրանք, փոխանակ այդ լուրը հաղորդելու, ինչպէս հեռագրված է և «Գործին» ու միւս լրագիրներին, ոչ միայն զաքարէական լռութիւն պահպանեցին (ահա ձեզ մի ամենօրեայ լրագիր, որ ուրանում է ակնյայտնի փաստերը), այլև անամօթութիւնը հասցրին այն աստիճանի, որ գրում են թէ՝ «Առաքելեանը կը վերադառնայ Ղարաբաղից և էլի կը սկսէ ստերով, հայհոյանքներով հարայ-հրոց բարձրացնել»։

Որպէս զի համոզվէք, որ ստերը դուք էք խօսում, դիմեցէք Ղարաբաղի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսին և նա ձեզ կը հաղորդէ—ի հարկէ, ի մեծ ցաւ ձեր սրտերի—որ ճշմարիտ, ես ընտրված եմ Ղարաբաղի թեմի պատգամաւոր 28 ձայնով ընդդէմ 10-ի, բայց ձեր թեկնածու Լէօն ստացել է միայն 5 ձայն։ Եւ ընտրված եմ հէնց այն յայտարարութիւնից յետոյ, որ ես արի «Մշակի» № 203-ում, թէ իմ ընտրելիներն են Իզմիրլեան և Դուրեան։

Երկրորդ ստութիւնը և քստութիւնը այն է, որ «գործակալները» կամենում են տեսնել «Մշակի» պարտութիւնը այն հանգամանքի մէջ, որ Թիֆլիսի թեմի պատգամաւոր ընտրվել է Ս. Ցարուբիանեան և ոչ Ա. Քալանթար։

Թէ Ա. Քալանթարի չընտրվելը և Ս. Ցարուբիանեանի ընտրվելը չէ կարող որևէ կերպով պարտութիւն համարվել «Մշակի» համար և «Մշակի» կաթողիկոսական հարցի մէջ բռնած դիրքի և ուղղութեան վրա այդ հանգամանքը որևէ ստուէր չէ կարող ձգել—դա արևի պէս պարզ է նրանց համար, որոնք կուրացած չեն կրքից և թայֆայական ստոր շահերից։

Հայ հասարակութիւնը շատ լաւ գիտէ, որ առաջադիմական բանակը, որի պարագլուխն է հանդիսանում «Մշակը», կաթողիկոսական ընտրելիներ է առաջարկում Իզմիրլեանին և Դուրեանին։ Ցայտնի է նոյնպէս, որ որոշ խմբակը թէև դնում է նոյնպէս Իզմիրլեանի թեկնածութիւնը, բայց երկրորդի մասին լռում է։ Մի քանի հանգամանքներ և կ. Պոլսից ստացված մի քանի նամակներ այն մասին, թէ այդտեղ մի շրջան ռատիկ ագիտացիա է մղում յօգուտ Սուրէնեան արքեպիսկոպոսի թեկնածութեան, կասկածներ յարուցին մեր մէջ, որ այդ խմբակը նպատակ ունի իբրև կաթ. երկրորդ ընտրելի անցկացնել Սուրէնեանին։ Եւ անկեղծօրէն ու բաց-համարձակ ասում ենք, որ երբ այդ կասկածը ամրացաւ մեր մէջ, մենք, որ առաջ ի նկատի ունէինք պ. Սամսոն Ցարուբիանեանի թեկնածութիւնը, իբրև թեմական պատգամաւորի, ստիպվեցինք փոխել մեր դիտաւորութիւնը, երբ իմացանք, որ յայտնի խմբակին պատկանողները մտադիր են այն դէպքում, երբ չկարողվի անցկացնել պ. Ա. Ահարոնեանի թեկնածութիւնը, իրանց քուէները տալ պ. Ս. Ցարուբիանեանին,—ոչ թէ նրա համար, որ նա թայֆական է (թայֆական լինել չէ կարող մի մարդ, որին թայֆայականները մանիչ և դաւաճան անուանեցին իրանց թերթերում 2 տարի առաջ), այլ միայն նրա համար, որ չընտրվի «Մշակի» խմբագիրը։ Մենք վախենում էինք, որ պ. Ս. Ցարուբիանեան, ընտրվելով առաջադիմականների և թայֆականների ձայներով, ստիպված կը լինի մի տեսակ ձայն տալ նրանց երկրորդ թեկնածու Սուրէնեանին։ Հէնց այդ նկատումներով մեր խումբը որոշեց դնել Ալ. Քալանթարի թեկնածութիւնը և ոչ պ. Ս. Ցարուբիանեանի։ Բայց վերջինս կարողացել է փարատել մշակականների կասկածը՝ բացարձակապէս յայտնելով, որ ձայն չի տայ ոչ մի կերպով Սուրէնեանին, այլ ձայն կը տայ Իզմիրլեանին և Դուրեանին, այսինքն այն թեկնածուներին, որոնք վաղուց «Մշակի» թեկնածուներն են։ Մեր գլխաւոր նպատակն եղել է ամբողջ ժամանակ, որ պատգամաւոր ոչ մի թեմում անց չը կենայ «թայֆական» անձն, այլ առաջադիմական և «Մշակի» հայեացքները դաւանող անձն, և մենք դեռ ընտրութիւնից առաջ մեր առաջնորդողի մէջ յայտարարեցինք, որ մենք կողմնակից ենք ամէն մի անձի ընտրութիւնը, լինի նա մշակական թէ չէզոք, միայն թէ նա կուսակից լինի մեր արտայայտած հայեացքներին («Մշակ» № 206)։

Ուրեմն, մեր գլխաւոր նպատակը իրագործված է. պատգամաւոր ոչ մի թեմում (Շամախի, Ղարաբաղ, Թիֆլիս, Երևան և Աստրախան) չէ ընտրված «թայֆական», այլ առաջադիմական և «Մշակի» հայեացքները դաւանող բանակին պատկանող անձն։

Գալով Թիֆլիսի պատգամաւորներին, պարզ է, որ Ս. Ցարուբիանեանը ստացել է և՛ մշակականների և՛ «թայֆականների» ձայները. վերջիններս, տեսնելով որ իրանց թեկնածուն, որ նախնական քուէարկութեան ժամանակ ստացել էր միայն 13 թերթիկ, չէ կարող անցնել, շտապել են իրանց ձայները տալ պ. Ս. Ցարուբիանեանին, որը, ստանալով այդ ձայները, և՛ մշակականների, որոնք արդէն ստիպել էին նրան բացարձակապէս յայտարարել, թէ Սուրէնեանին ձայն չի տայ, պարզ է, որ պէտք է աւելի ձայներ ստանար, քան Քալանթարը, որին ձայն չը տուին նաև օրմանեականները. և հէնց այդ հանգամանքը, որ վերջիններս իրանց ձայները չը տուին Քալանթարին, պերճախօս ապացոյց է, որ ոչ մի բլոկ մշակականների և օրմանեականների միջև չը կար։

Ուրեմն այն հանգամանքը, որ պատգամաւոր ընտրվել է պ. Ս. Ցարուբիանեանը և ոչ Քալանթարը, որ և բացակայ էր քաղաքից, ոչ մի կերպով չէ կարող համարվել պարտութիւն «Մշակի», քանի որ պատգամաւոր ընտրվել է մի անձն, որ յայտարարել է իրան անպայման կուսակից Իզմիրլեանի, Դուրեանի, և հակառակորդ Օրմանեանի ու Սուրէնեանի։ Թող «թայֆականները» չը մոռանան, որ թէև իրանց 13 աննշան ձայները տուին պ. Ս. Ցարուբիանեանին միայն նրա համար, որ Քալանթարը չընտրվի, բայց այդ Ս. Ցարուբիանեանը նոյնն է, որ կուռում էր մեզ հետ իրանց դէմ էջմիածնի կենտրոնական ժողովում և որն անուանվեց իրանց կողմից «մատնիչ և դաւաճան»։ Այսօր այդ ձեր կարծեցեալ մատնիչին և դաւաճանին ձայն էք տալիս միայն նրա համար, որ կարողանաք ասել թէ՝ «Մշակը» պարտութիւն կրեց։ Ոչ, «Մշակը» դրական յաղթութիւն տարաւ ամէն տեղ կաթողիկոսական հարցում։

Իսկ դուք շարունակեցէք ստել, շարունակեցէք յայտնել, թէ Հ. Առաքելեան պատգամաւոր չէ ընտրված, թէ Ա.. Ահարոնեան նախնական քուէարկութեան ժամանակ առաջին թեկնածու է ընտրվել, մինչ նա ստացել է միայն 13 ձայն։

Բայց դուք միայն ձեզ էք վարկաբեկում. հասարակութիւնը գիտէ լաւ գնահատել իրողութիւնները և երևոյթները։ Ձեր թագաւորութիւնը, իբրև ստութիւն, կեղծիքի թագաւորութիւն, անցել է։

Գալով Ս. Ցարուբիանեանին, մենք շնորհաւորում ենք նրան, որ կարողացաւ իր տատանման և համակերպման քաղաքականութիւնից անցնել գոնէ այս հարցի մէջ կրքոտ, որոշ քաղաքականութեան և վերջնականապէս յարել «Մշակի» հայեացքներին։

Հ. Առաքելեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

(Սեփ. թղթ.)

—

Հանդ (Օխչու շրջան), 12 սեպտ.

Այս շրջանը կարելի է ասել ամենայետ ընկած և չը զարգացած շրջաններից մէկն է, ուր ամենուրեք տգիտութիւնն է թագաւորում և հայ ու թուրք գիւղացիութիւնը գտնվում է վերին աստիճանի մոտեսապէս քայքայված վիճակի մէջ։

Շէշտ է, տասնեհինգ կամ թերևս աւելի տարիներ առաջ այս շրջանի գիւղացիները տնտեսական բաւարար վիճակ ունէին, սակայն այժմ այդ երջանիկ տարիները անցել են, որոնց մասին գիւղացիները մեծ հիացմունքով են պատմում։

Անցնում են իրար ետևից տարիները, բնակիչների թիւը բազմանում կրկնապատկվում է, իսկ հողը մնում է նոյնը և դեռ աւելի պակասում է շնորհիւ բազմաթիւ հեղեղների առած վնասների, որ գրեթէ իւրաքանչիւր տարի կրկնվում է մի քանի անգամ։

Սրան պիտի աւելացնել հայ-թուրքական ընդհարումների պատճառած վնասները, որը նոյնպէս քիչ չէ։

Ի՞նչ անեն գիւղացիները, երբ մէկը եզ չունի, միւսը՝ սերմացու, մի երրորդը արտի պակասութիւն է զգում։ Այս տարվայ բերքի վրա մեծ կերպով ազդել են անցեալ աշնան անընպատ պայմանները, ինչպէս նաև գարնան չափից դուրս անձրևային լինելը, որ համարեա մինչև մայիս ամսի վերջը եղանակը անձրևային է եղել, որով գիւղացիները հնարաւորութիւն չեն ունեցել ոչ աշնանը և ոչ էլ գարնանը իրանց թոյլ ոյժերը ներածին չափ վար անել, որը գոնէ ժամանաւոր կերպով իրանց մեծ, անթիւ կարիքներին բաւարարութիւն տուած կը լիներ։

Հունձը արդէն վերջացել է. փոխանակ գիւղացին ուրախանալու, յուսահատ աչքով է նայում իր դատարկ ամբարին... ի՞նչ անէ, ոչ ամբարն է լիքը և ոչ էլ վարագը. ոչ հաց ունի իր կիսամերկ երեխաներին կերակրելու և ոչ էլ գարման իր հատ ու կտոր եզներին տալու։

Այս տարի էլ բոլոր գիւղերի բերքը պակաս է։ Մի երկու-երեք ամիս յետոյ բոլոր գիւղացիները՝ հայ թէ թուրք՝ հացի կարիք կը զգան։ Եւ գիւղացիները քաղցի ճիրաններից ազատվելու համար պիտի ծախեն իրանց մեծ ընտանիքը պահող միակ եզը, կովը և կամ պիտի պանդխտութեան դաւազանը ձեռքն առնեն՝ դիմելով քաղաքների օգնութեանը, ուր անգործ քանուորների թիւը արդէն շատ է։

Նա՝ գիւղացին փոխանակ տարէ-ցտարի իր եզների թիւը աւելացնելու, փոխանակ անհամբեր գարնան սպասելու, զրկվում է թէ իր ունեցածից և թէ յուսահատ սրտով հեռանում է հայրենի գիւղից։

Բիւրասպի

—

Զալալ-Օղլի, 15 սեպտեմբերի

Զալալ-Օղլին, որպէս և գաւառական միւս ամարանոցները, գրաւում է դէպի ինքը հեռու արևում պապակվող հասարակութեանը։ Նա գեղեցիկ է. օդը մաքուր, ջուրը պաղ ու առողջարար, անտառը մոտիկ, բընութիւնը հարուստ իր բազմապիսի տեսարաններով՝ զուրկ խոնաւութիւնից. բայց որքան գեղեցիկ է բնութիւնը, դրա հակառակ՝ կեղտոտ ու անհոգ է Զալալ-օղլեցին։

Տեղական ազգաբնակութեան մի մասը պարապում է «վաճառականութեամբ», միւս ստուար մասը օրավարձով աշխատող բանւորներ են, որոնք վաղ առաւօտվանից մինչ ուշ գիշերը իրանց միակ մխիթարիչ երկու չարքաշ եզների հետ «ծոբ» կամ «ցարբ» գոռալով մաշում են իրանց կեանքը օրական 50—60 կօպ. ստանալու համար։

Ունի և ահագին թւով ուսանողներ, որոնք հեռու են միանգամայն հասարակական գործունէութիւնից և միայն «Մելիսոնի» (Զալալ-Օղլու մեծ փողոցն է, որտեղ դուրս են գալիս զբօսնելու) և զանազան կլուբներում ագօր ու ադրուա գոռալով են անցնում իրանց ամարային «տաղտկալի» արձակուրդը։

Մէկը «վաճառական», միւսը արիւն քրտինք թափող աշխատաւոր. բնականաբար, հասարակական ամէն գործ պէտք է կաղի, և այդպէս էլ է Զալալ-Օղլում. չը կայ դպրոց, (եղածն էլ կարելի է չեղած հաշուել), չը կայ թատրոն, չը կայ տանուտէր, որ մեզ մօտ «հասարակական» այս կամ այն գործում «դրական» դեր խաղացողը նա է լինում, և վերջապէս չը կան հասարակութեան համար սրտացաւ «երևելիներ»։ Հետաքրքրվում ես դպրոցով, ուզում ես տեսնել, մօտենում ես և ինչ. մի հրաշալի շինութիւն ահագին բակով. մարդ մի բոպէ հրձվում է. ներս ես մտնում և քո աչքի առաջ պատկերանում է մի «տէր-թօդիկեան» ախոռ. սենեակների մի մասը բոլորովին մերկ հող է ածված, իսկ միւսներում «ժամանակաւոր» տախտակներ են շարված, «որ չորանայ և յետոյ շինեն», և մինչև օրս էլ չորանում է, որ շինեն։ Աւելացրէք դրան և լոյսի աբօլիւտ բացակայութիւնը՝ և պատկերը լիակատար կը լինի։ Զար լեզուները ասում են, որ դպրոցը նստել է հասարակութեան վրա 40 հազար ռուբլի և աւելացնում են, որ փողերի մի մասը կերված է. հետաքրքրական է՝ թէ ինչու յանձնաժողովի անդամները հաշիւ չեն ներկայացնում կամ ինչու Եկատերինօդարում ապրող Զալալ-օղլեցի Դաւթեանները, որ 7000 ռ. օժանդակութիւն են ցոյց տուել, որից 4000 ռ. ստացված ու ծախսված է, իսկ 3000 ռ. խոստացել են ժամիկ ապագայում տալու, հաշիւ չեն պահանջում լրագրութեամբ այն յանձնաժողովից, որին յանձնել են փողերը։

Դպրոցում մի զգալի պական էլ թատրոնական դահլիճի ու բեմի բացակայութիւն է. ախր չէ՞ որ թատրոնական լաւ դահլիճը դպրոցին կարող է բաւական օգուտներ տալ. յուսով ենք, որ ներկայ հոգաբարձութիւնը կը լրացնէ այդ զգալի պակասը։

Հետաքրքրվում ես միւս հասարակական հիմնարկութիւններով, գնում ես գիւղական դատարանը. օրը կիրակի է, երեկայում ես, որ հասարակութեան բոլոր խաւերից եկած կը լինեն իրանց կարծիքը յայտնելու այս կամ այն խնդրում. բայց դրան հակառակ ինչ ես տեսնում. 10—15 տեղական տէր ու տնօրէնները նստած վճիռ են կայացնում «հասարակութեան» համար, ընտրութիւն անում։ Առաջարկվում է ընտրել հոգաբարձուներ. ձայն են տալիս X, Y, Z. ընդունվում է «միաձայն»։ Հարկաւոր է ընտրել երեսփոխան. ձայն են տալիս վերոյիշեալ X ին. ընդունվում է «միաձայն»։ Հարկաւոր է ընտրել գիւղական դատաւորներ. դարձեալ նոյն X, Y, Z-երը։ Հարկաւոր է ընտրել նոր աղբիւր շինելու կօմիսիա և լիազորութիւն տալ նրանց սահմանել պետական բանկից 6000 ռ. «գործադրել» այդ ձայն են տալիս X, Y, Z-երին։ Եւ այդպէս, աշխատաւոր ժողովուրդ, որ միանգամայն հեռու է պահում իրան «հասարակական» գործերից և միայն անկիւններում է բողոքում X, Y, Z-երի դէմ, որ ուտում են գիւղական, կամ ինչպէս իրանք են ասում՝ «մեր փողերը»—խնդրում ենք գոնէ կիրակի ու տօն օրերը մի կամ երկու ժամով գնան իրանց «հասարակական» ժողովները և թոյլ չը տան, որ X, Y, Z-երը դառնան իրանց տէր ու տնօրէնը։

Ահա թէ ովքեր են մեր գործիչները...

Մինդանա

—

Խնձորեսկ (Զանգ. գ.), 18 սեպտ.

Մեզանում գողութիւնները հսկայական չափերի են հասել. օր չէ լինում, որ խաղաղ ազգաբնակութիւնից լծկաններ ու կթան կովեր, նոյնիսկ ձիաներ, ջորիներ չը գողանան։

Գիւղացիք մի այնպիսի դրութեան են ենթարկված, որ գրեթէ անհնարին է. գողանում են առանց խորութեան թէ աղքատից և թէ հարուստից։ Ամսիս 14-ին «Սունդարա» կոչված տեղից գողացան Մովսէս Դիլանչեանցի 3 եզը, Սիմէօն Արզումանեանի մէկ ձին և կովը հորթի հետ. վերջապէս օգոստոսի սկզբից մինչև ամսիս 15-ը Խնձորեսկի գիւղացիներից գողացել են 43 հատ եզ ու կով, 3 հատ ձի։ Տեղական պրիստաւներն անզօր են այդ գողութիւնների առաջն առնելու։

Գիւղումս տարածված է տիֆ և տենդ ու ջերմ հիւանդութիւնը։

Բերթոս

—

Բոզաւանդ գիւղ (Գեօկչայի գ.), 20 սեպ.

Այսօր ժամը 10-ի մօտ այստեղ սաստիկ և չը տեսնված քամի բարձրացաւ։ Քամին մէկը միւսի հետևից սկսեց գլորել խոտի դէզերը, ցրիւ տալ չափարները։

Ժամը 12-ին, որ դեռ քամին շարունակվում էր, Բոզաւանդ գիւղաքնակչուհի Նաբաթ Շադիդանեանցը վառում է հարևան Մարտիրոսեանցի բաց թոնիրը հաց թխելու համար։ Մօտիկ Մարտիրոսեանցի խոտի դէզը վառվում է և այդ վառված դէզը քամին ցրիւ է տալիս գիւղի մէջ արևմուտքից արևելքի ուղղութեամբ։ Վայրկենապէս ամբողջ գիւղը բոցավառվում է։ Գիւղը բաղկացած է 30 տնից, որից 15 տուն ընտանիք զրկվում են իրանց տներից, խոտերից, դարմանանոցներից, փայտ ու ճախիչ և բոլոր կարողութիւնից։ Գիւղի եկեղեցու մի մասը այրվել է, բայց եկեղեցին ազատվել է խարան այրվելուց, շնորհիւ վրա հասած օգնութեան, որ արել են Արշաւիր քահանայ Մայիլեանցը և ուրիշ 3 թուրք։

Այսպիսով, 15 ընտանիք՝ 150—200 հոգի մնացել են բաց օդի տակ, սոված ու մերկ։ Այրվել է նաև ցորենի ամբարը։ Վնասը 5000 ռուբլուց աւել է. անհրաժեշտ է շուտափոյթ օգնութիւն։

Սրտաճմլիկ տեսարան էր գիւղը այրվելիս. կանայք և երեխաները լաց էին լինում, տնային կենդանիները բառաչում էին, շները ոռնում էին. այրվել են նաև կենդանիներից։ Վնասված ընտանիքներն են՝ 1) Ե. Սարգսեան, 2) Ս. Իւղբաշեան, 3) Մ. Իւղբաշեանցի որբերը, 4) Վ. Ցարուբիանեան, 5) Հ. Ցարուբիանեան, 6) Գ. Գասպարեանց, 7) Ա. Ադամեան, 8) Ս. Գասպարեանց, 9) Բ. Տէր-Մարտիրոսեանցի որբերը, 10) Ց. Դամիրչեանի որբերը, 11) Վ. Հայրապետեանի որբերը, 12) Թոնրատէր Մարտիրոսեան, 13) Հ. Միրզայեան, 14) Գ. Հայրապետեան և այլն... Ամենաշատ վնասը եղել է Միրզայեանին և Հայրապետեաններին։

Գարոյր ք. Ստեփանեան

ՄՕԼԵՐԱ

—

◆ Թիֆլիսում, քաղաքային սանիտարական-բժշկական գործակիր ժամանամողովի տեղեկութիւնների համաձայն, սեպտ. 20-ին խօլերայով հիւանդանալու դէպք տեղի չունեցաւ։ Հիւանդացած Նինա Նաղէինան և Նինա Սեմեոնովան հիւանդացած են եղել ոչ խօլերայով։ Կիրակի, սեպտ. 21-ին, խօլերային բարակն են տարել հիւանդ Մարիա Կիկէշէձին, 30 տարեկան (10-րդ քաղաքամաս, Մօլօկանսկայա փող., տ. № 27)։ Սեպտ. 22 ին մինչև կէսօր հիւանդացաւ մի հոգի՝ Գէորգ Սարգսեան, 21 տարեկան, բանւոր (4-րդ քաղաքամաս, Լերմօնտովսկայա փող. տ. Տէր-Միքայէլեանի)։

◆ Թիֆլիսի նահանգապետը տեղեկացրել է քաղաքագլխին, որ թոյլատրում է փոխադարձաբար 8044 ռուբլի վերցնել խօլերայի դէմ կռուելու համար այն պայմանով, որ այդ գումարը նշանակվի 1908 թ. լրացուցիչ № 2 երևսի նախահաշիվի մէջ։

◆ Կենտրօնական հակախօլերային պատուաստումների տեղում սեպտ. 20—21 պատուաստումներ ընդունեցին 21 հոգի, Հաւլաբարի բաժանմունքում 3, Խարփուխի՝ 4, Կուկիսայի՝ 3, ընդամենը 31 հոգի։

◆ Պետերբուրգում սեպտ. 22-ին հիւանդացան 141, մեռան 72 հոգի։ Շրջակայքում հիւանդացան 17, մեռան 4 հոգի։ («Հ. Գ.»)

◆ Դանձակում սեպտ. 21-ին խօլերայով հիւանդացան 9, մեռան 4 հոգի։ («Հ. Գ.»)

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Ցիշեցնում ենք, որ այսօր երեկոյեան, բօրսայի դահլիճում նշանակված է Կ. Հ. Բ. ընկերութեան արտակարգ ընդհանուր ժողովը, որը երկրորդը լինելով՝ կը կայանայ, որքան թւով անդամներ էլ որ ներկայ լինեն։

◆ Թիֆլիսի ոստիկանապետը, դիտելով Նադէժդինսկի երեխաների ապաստարանը, այնտեղ պատահած խօլերայի մի դէպքից յետոյ, գտել է նրան վերին աստիճանի հակասանիտարական դրութեան մէջ, որի մասին նա հաղորդել է քաղաքային վարչութեան, խնդրելով ապաստարանին նպաստ նշանակել՝ կարգին դրութեան հասցնելու համար։

◆ Սօլոլակի տունէլի աշխատանքները շարունակելու ժամանակ կրկին գտել են մի անուշահամ սառնորակ աղբիւր, որ օրական տալիս է 150,000 դոլլ ջուր։

◆ Կիրակի օրը քաղաքային վարչութիւնը Զուբալովի ժողովրդական տան խնամատար ժանմաժողովի հետ դիտեց այդ տունը և գտաւ նրա մէջ մի քանի դեֆէկտներ, որոնց մասին որոշեց հաղորդեը եղը. Զուբալովների հաւատարմատարին։ Երբ այդ դեֆէկտները կարգի կը բերվեն, այն ժամանակ մանմաժողովը տունը կը վերցնի իր իրաւասութեան տակ։

◆ Ինժենէր Վուրցել մի նամակ է ուղարկել Թիֆլիսի քաղաքագլխին, որի մէջ յայտնում է, որ թէև ինքը դումայի ձայնաւորը է, սակայն ներկայումս նա անկարող է լինում յաճախել նիստերին, որովհետև զբաղված է Կովկասեան լեռնաշղթայով երկաթուղի կառուցանելու նախագծի քննութեամբ, որ ի դէպ է ասել, շուտով գլուխ կը գայ։

◆ Այն յատուկ ժանմաժողովը, որ զինուորական ինժենէրական վարչութեան կից զբաղվում էր քաղաքային ինքնավարութեան այն միջնորդութիւնը քննելով, որի համաձայն վառօդի պահեստները առաջարկվում է տանել քաղաքից դուրս, եկել է այն եզրակացութեան, որ քանի որ պահեստներում պահվում է անծուխ վառօդ, որի գործողութեան բոլորովին այլ է, և որ պահեստների տեղափոխութիւնը կապված է ահագին ծախքերի հետ, որոշել է այդ պահեստները չը տեղափոխել քաղաքից դուրս, այլ գտնել կրկին 4000 քառ. սաժէն հողաբաժին և ցանկապատել։

◆ Ինչպէս յայտնի է, սրանից երեք շաբաթ առաջ կովկասեան գիւղատնտեսական ընկերութիւնը մինչև 12 հազար հարցական թերթիկներ էր ուղարկել հացի, խոտի և զանազան տունկերի բերքի վերաբերութեամբ։ Ներկայումս ընկերութիւնը սկսում է պատասխանները ստանալ առանձնապէս Թուրք ազգաբնակութեան բնակված տեղերից։ Այդ թերթիկներից երևում է, որ հացի բերքն այս տարի միանգամայն բաւարար է։

◆ Կովկասեան ուսումնարանական շրջանի դիւանատունը բանակցութիւններ է սկսել գէներալ Ղօրդանեանի հետ, որ ստանձնէ Վերայի զառիվայրի վրա գտնվող իր կալուածքը (ուր սկզբում «Բէլ-Վիւ»-ն էր գտնվում) 80,000 ռուբլով բէալական դպրոցի շինութիւն կառուցանելու համար։ Գէներալ Ղօրդանեանը այդ հողաբաժնի համար պահանջում է 120,000 ռուբլի։ Ընդամենի յանձնարարված է քաղաքային տեխնիկ Օհանջանեանին կազմել շինութեան կառուցման նախագիծը և նախահաշիւը։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը քննելով Նաւթլուղ կայարանի երկաթուղային ծառայողների խնդիրը, որ նրանց կացարանների համար յատկացված հողաբաժինների կապալի գինը իջեցվի, որոշել է միջնորդել դումայի առաջ, որ իւրաքանչիւր քառ. սաժէնի համար իջեցվի 5 կոպէկով։

◆ Դարեգին արքեպ. մեզ խնդրում է յայտնել, որ «Մշակ» օրաթերթի № 208-ում «Կաթողիկոսական պատգամաւորի ընտրութիւնը» վերնագրով յօդուածում իր ասած խօսքերը՝ «նախագահը լինելու է աշխարհական անձն», պէտք է կարդալ այսպէս. «հանգուցեալ վեհափառի շնորհած կանոնադրութիւնով, ժողովն է ընտրում իր նախագահը»։

◆ Սեպտեմբերի 20-ին կայացաւ վրաց ազգագրական ընկերութեան ընդհանուր ժողովը։ Տակաշվիլին զեկուցեց, որ նա վրաց մէջ գրագիտութիւն տարածող ընկերութեան արխիվում գտել է մի ձեռագիր գիրք հետևեալ վերնագրով. «Հակիրճ տեղեկութիւններ վրաց վիպասանների մասին»։ Գրքի անյայտ հեղինակը խօսում է վրաց հասարակական գործիչների և գրողների մասին, սկսած Դաւիթ թագաւորից մինչև 19-րդ դարի առաջին քառասակը։ Նրա մէջ նա կենսագրական տեղեկութիւններ է հաղորդում այդ անձանց մասին, ծանօթացնում է ընթերցողներին այն ժամանակ Վրաստանում տիրող հասարակական կարծիքի և շիլաների հետ։ Այդ գիրքը ներկայումս տպագրվում է և լոյս կը տեսնի շուտով։

◆ Մերդա-Իսակ-խանը նշանակված է Կարսի պարսկական փոխ-հիւպատոս։

◆ Թիֆլիսի 1-ին արական գիմնազիայի 24 աշակերտներին, որոնց բանտարկեցին գիմնազիայի մօտ անկարգութիւն անելու համար, գէներալ-նահանգապետի կարգադրութեամբ սեպտեմբերի 20-ին արձակել են։

Հոկտեմբերի սկիզբներում կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան մէջ տեղի կունենայ ընկերութեան փոխ-նախագահի ընտրութիւնը, հեռացած Խ. Վէրմիշեանի փոխարէն։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Սեպտ. 22-ին, Ստեփան Ստեփանեանի այգում, քէֆի ժամանակ Թիֆլիսեցի Սիմէօն Դուգաշվիլին գինու շրջով մի քանի վէրքեր է հասցնում պարսկահպատակ Գօդոս Յարութիւնեանին։ Վիրաւորվածը տարված է հիւանդանոց։ Դուգաշվիլին ձերբակալված է։

Սեպտ. 22-ին, ցերեկվայ ժամը 2-ին, Թիֆլիսի 2 րդ կարգի վաճառական Աբրամ Բախանովը յայտնել է ոստիկանութեան, որ նրա խանութից, որ գտնվում է Վիննի զառիվայրում, № 6 տանը, կեղծ բանալու օգնութեամբ գողացել են 500 ռուբլու զանազան ապրանք։ Ձեռք առնված միջոցների շնորհիւ չարագործներից մէկը՝ ախալցխացի Մօրգօխ Անտոնշվիլին ձերբակալված է. նա յայտնել է, որ գողացված ապրանքի մի մասը ծախել Թիֆլիսեցի Կուլանիանցին, իսկ մի մասը յանձնել է պահելու Գայիանէ Առաքելեանին. երկուսն էլ ձերբակալված են։

Սեպտ. 22-ին Պեսկովսկայա փողոցում ոստիկանական պաշտօնեաները ձերբակալել են կառքով անցնող գանձակեցի Ջալալ-բէկ Սադրդ-բէկովին, որի մօտ եւ փրնջիի մէջ փաթաթած գտել են 919 հատ փամփուշտ 3-գծանի հրացանի համար։

Սեպտ. 22-ին, Բեմօնանի փողոցում, վէճի ժամանակ Գօրու գաւառի գնակիչ Սիմէօն Կացիշվիլին մահացու վէրք է հասցնում Իլլարիօն Օրժանիկիձէին, որը իսկոյն և եթ մեռնում է։ Ցանցաւորը ձերբակալված է։

Սեպտ. 22-ին ձերբակալվեց պարսկահպատակ Այէքսանդր Ամիրխանեանը, որ «Եղբ. Թումպանեանի» գրասենեակից յափշտակելով 4800 ռուբլի էնդելիում, փախել էր Թիֆլիս։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

(Հեռագրով)

Էջմիածին, 23 սեպտեմբերի

Անիից վերադառնալով՝ լրագրներում կարդացի Սուրէնեան արքեպիսկոպոսի հերքումը։ Նրա փաստերը անհիմն են և չեն համապատասխանում իրականութեան։ Մանրամասնութիւնները նամակով։

Գարեգին վարդապետ

Թիֆլիս, 16 սեպտ.

Սրանով վերջին անգամ դիմում ենք Թիֆլիսի չքաւոր աշակերտներին օգնող «Լոյս» ընկերութեան վարչութեանը, որ իր անցեալ տարվայ գործունէութեան վերաբերեալ հաշիւը ներկայացնի մեզ։ Վեց օրվայ ընթացքում ընդհանուր ժողով գումարի. հակառակ դէպքում մենք կը դիմենք օրէնքի, ապագայի պատասխանատուութիւնը թողնելով վարչութեան վրա։

«Լոյս» ընկերութեան վերատուղող յանձնաժողովի անդամներ՝ Կարապետ Բաբայեանց, Գրիգոր Աբրահամեանց, Ենովք Սողոմոնեանց։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Սեպտեմբերի 21-ին ռուսաց դրամատիկ խումբը արտիստական թատրոնում, ներկայացրեց «Երեկոյեան շփոր» դրաման, հեղ. Բէյերլէնի։ Այդ պիէսան անցեալ տարիներում թէ ռուսաց և թէ հայոց բեմերում շատ անգամ է ներկայացված, ուստի և չարժէ կանգ առնել նրա բովանդակութեան վրա։ Խաղը ընդհանրապէս լաւ էր. մանաւանդ աչքի էին ընկնում պ. պ. Ուսաուդով-Կուլեաբկո և Բաբաեով երկու վախմիտրների դերերում։ Աւելի թոյլ էին պ. Մամօնտով պօրուչիկ Լաուֆէնի դերում և տիկ. Բօրեգար՝ Կլարա Ֆելդարդի դերում, մանաւանդ առաջին երկու գործողութիւններում։ Պ. Տէրչէնկօ կոմս Լէդէնբուրգի փոքրիկ դերը կատարեց շատ գեղեցիկ։ Ի.

Կիրակի, ամսոյս 21-ին, Աւճալեան լաբանում տեղիս հայ «Դրամատիկ-Գեղարուեստ» սիրողների խումբը ներկայացրեց «Բարեգործութեան դիմակի տակ» Էմին Տէր-Գրիգորեանի դրաման։

Ընդհանուր անսամբլը բաւարար էր։ Թատրոնում բացակայում էր հասարակութիւնը։ Ցանկալի կը լինէր հասարակութեան լուրջ աջակցութիւնը դէպի նորակազմ խմբի ձեռնարկած վեհ գործը։ Այս՝ խմբի երկրորդ ներկայացումն էր։ Դէպքը մեծ է։

Իսխա

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

22 սեպտ.

ՏՕՄՍԿ։ Երէկ ցերեկվայ ժամը 4 և 15 րոպէին Օնգուդայում և շրջակայքում զգացվեց երկրաշարժ, որ տևեց մի րոպէ։

ՀԷԼՍԻՆԳՖՈՐՍ։ Գեներալ-նահանգապետի նախաձեռնութեամբ կազմակերպվում է մի խառն յանձնաժողով՝ Էկինսի մօտ 1806—1809 և 1854—1855 թ. պատերազմներին ընկած ռուս զինուորականներին արձան կանգնեցնելու նախագիծը իրագործելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մինչև 1909 թ. մարտի 17-ը երկարում է արտակարգ պահնորդական դրութիւնը Ֆէրգանի շրջանում, Կրասնովոդսկ, Ղզլարվադ, Ասխաբադ, Մերվ, Նոր-Բուխարա, Սամարղանդ, Աշիրա, Զերնեաէվո, Տաշկենդ քաղաքներում։

Պետերբուրգի համալսարանի պրոֆէսորների խորհուրդը այսօրվայ նիստում իբրև պատուիրակների Պետական Խորհրդի անդամի ընտրութեան ժամանակցելու համար ընտրեց Բէրգմանին, Զելինսկուն և Ֆագօրսկուն։

ՊԱՐԻԶ։ Երկրագործութեան մինիստրը հանդիսաւորութեամբ բացեց ճանապարհների հաղորդակցութեան առաջին միջազգային համագումարը։ 45 երկիրներ ուղարկել են իրանց ներկայացուցիչներին։ համագումարի անդամների թիւը հասնում է 3500-ի։ Ռուսաց դեսպանատան խորհրդատու Նեկլիւդովը և առաջին ռուսաց պատուիրակ Ֆօն-Ֆինդրիխը տեղեր են գրաւում պաշտօնական ամբիոնում։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ։ Զախակողսեան կուսակցութիւնները ընդունեցին այն առաջարկութիւնը, որով Ֆօլկէտինգը մտադրութիւն է յայտնելու աջակցել նախկին մինիստր Ալբերտիի յանցանքների հետևանքները թուլացնելու գործին. միւս կուսակցութիւնները ձայնատուութիւնից ձեռնպահ մնացին։

ՊԱՐԻԶ, Կառավարութիւնը, ցանկանալով աւստրիական կայսրին նախաձեռնութիւն տալ Ֆալիէրին սեպտ. 20-ին յանձնված նամակը յայտարարելու մէջ, բացարձակ լռութիւն է պահպանում այդ փաստաթղթի վերաբերութեամբ։ Ցաւենալի դէպք, այն տեղեկութիւնների համաձայն, որոնք ըստ երևոյթին ըստ է վիէննական հեղինակաւոր աղբիւրից, կայսրի նամակը պարզում է Արևելքի ընդհանուր դրութիւնը, շօշափելով մանաւորապէս այն հարցը, թէ մի գուցէ թիւրք-բուլգարական միջադէպ ծագէ և թէ ինչ դեր է կատարելու այդ դէպքում Աւստրիան։

Հաւատացնում են, որ կայսրը կը յայտնէ, որ նա նախաձեռնութիւն չի վերցնի իր վրա՝ խախտելու բերլինեան դաշնադրութիւնը ստորագրող պետութիւնների համաձայնութիւնը, սակայն, նկատի առնելով Աւստրօ Ունգարիայի շահերը, պէտք է նախատեսել, որ շուտով, գուցէ և մօտ օրերս, դէպքեր պատահեն Բուլգարիայում։

Այնուհետև կայսրը իբր մատնանշում է, որ Աւստրիայի ձեռքով Բոսնիան և Հերցեգովինան գրաւելու խնդիրը պէտք է վճռված բան համարել։ Սակայն այդ լուրերը պաշտօնական չեն։

Ժամ. խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. ոչքի ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱԽԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու. վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Մ. ՏՈՒՐԲՕՎԻՉ — 1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Օ. Վ. ԳԵՑԵՎՍԿԱՅԱ ԷՆԳԵԼ—5½—6 ժ. մանկաբարձ. կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—5½—6½ ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Ա. Ց. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ.
Վճարը 50 կ.։ Հիւանդները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“
գրավաճառանոցում վաճառվում են Աւետիս Պողոսեանի հրատարակչական ֆոնդի հետևեալ հրատարակութիւնները։
№ 1. Պատկերներ կենդանիների կեանքից (պատկերազարդ մանկական) 40 կ.
№ 2. Լ. Ն. Տոլստոյ.—Ժողովրդական պատմուածքներ Ա. պրակ 30 կ.
№ 3. Վիլհելմ Հաուֆ.—Ինքնակոչ իշխանը (պատկերազարդ, մանկական) 10 կ.
№ 4. Լ. Ն. Տոլստոյ.—Ժողովրդական պատմուածքներ Բ. պրակ 20 կ.
№ 5. Փնջիկ, մանկական երգարան եւրոպական նօտաներով, կազմեց Աղատ Մանուկեան 30 կ.
(օ. մ.) 10—7

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ, առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։
Հիւանդների ընդունելութիւնը։ 12—1 առաւօտ. 5—6 երեկոյեան
Միքայէլեան փող., № 36, տ. Ճավճանիձէի։
100—21

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ
համար պատրաստ է.
1) Էդմ. Ամիչիսի «Սիրտ» գրքից Աշակերտի յիշատակարանը 30 պատկերով, թարգմանված գերմաներէնից։ (Նոյն գրքի Ամսօրեայ պատմութիւնները հրատարակել եմ առանձին գրքով՝ 10 պատկեր մէջը, գինը 40 կոպ.)։
2) Գրիմի հէքիաթների հատընտիր ժողովածու. ընագրից թարգմանած, բազմաթիւ պատկերներով։
Հրատարակելու գործում կարիք ունեմ ազնուասիրտ մարդոց աջակցութեան։ Հասցէս՝ Թիֆլիս, Միքայէլեան փողոց, № 82.
Ս. Քամալեանց
(չ. շ.) 2—1

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ
ՅՈՎՍԷՓ
Մելիք-Զհանեանցի
Сололакская ул. № 10, рядомъ съ аптекой Оттенъ
Ընդունվում են աշակերտներ գիշերօթիկ և երեքեկ և պատրաստում են բոլոր միջնակարգ դպրոցների համար։ Աւանդվում են ռուս, հայ, գերմ., լատին և ֆրանսիական լեզուներ։ Այդտեղ կազմակերպված են և խմբական պարապմունքներ միջնակարգ դպրոցների բարձր դասարաններ մտնել ցանկացողների համար։ Առարկաներ աւանդելու համար հրաւիրված են մասնագէտ ուսուցիչներ։ Ի միջի այլոց աւանդվում է և իտալերէն։
(օ. մ.) 10—7

ԲԺՇԿՎՈՒՄ Է ԱՐԴԵՕՔ ՍԻՖԻԼԻՍԸ
ԱԼՖՐԵԴ ՖՈՒՐՆԻԷ
Թարգմ. բժ. ԱՐԱՄ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Գինն է 35 կոպ.։
(չ.) 10—2

ԹԱՏՐՕՆ ՀԻՒՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ
66 նոր տեսակի ֆօկուսներ։ Վերին աստիճանի զարդեցուցիչ թէ ծերացածների և թէ ջահելների համար. օրինակ՝ հիեfտրական տպարան, մոգական ժամացոյց, կախարդական արկղիկ, ուշադիր խաղաթուղթ, հանելուկային տիր. մոգական գաւազան եւ ուրիշ 6 ֆօկուսներ։ Հանդիսատեսները միանգամայն սքանչանում են և ամբողջ տունը փոխարկվում է մի կախարդական ամրոցի։ Գինը՝ ճանապարհածախքով՝ միայն 86 կոպ. (վերագիր վճարով 10 կոպ. աւելի)։
Հասցէ՝ Магазинъ „Развлеченіе“ Варшава. 72.
(չ.) 5—3

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Հատոր Ա.—Հին Եկեղեցին
Հիւսեց
Երուանդ վարդապետ Տէր Մինասեանց
XII+396 էջ, գինն է 1 ր. 25 կ.
Դիմել էջմիածին՝ Երուանդ վարդապետին։
(չ. ու. շ.) 5—4

УГОЛЬ
КУЗНЕЧНЫЙ, ПАРОВИЧНЫЙ, ПЛАМЕН., АНТРАЦИТЪ, КОКСЪ.
ЦѢНЫ ОПТОВЫЯ.
А. БРАУХЛИ, Харьковъ.
52—17

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԵՒ ԱՆԳԼԻԵՐԷՆ
կարդալ, գրել և խօսել սովորեցնում են 8 ամսում տեսական և գործնական զբաղմունքների միջոցով. ամսական 5 ր.։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1 ից ամեն օր 10—12 և 4—7 ժամը։
Միքայէլեան պրօսպ., տուն № 24/4
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութ. կանդիդատ՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(օ. մ.) 20—9

«Մշակի» յայտարարութիւններից օգտվողներին առաջարկվում է պատուէրներ տուած ժամանակ յիշատակել լրագրի անունը և համարը։

ՎԵԼԵԱՄԻՆՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ № 8.
Նոր բացված արհեստանոցում ընդունում են տղամարդկանց հագուստների պատուէրներ միանգամայն հմուտ և երկար տարիների փորձառութիւն ունեցող
ԵՒՐՕՊԱԿԱՆ ԴԵՐԶԱԿՆԵՐ
ԱԿՕՊԵԱՆ ԵՒ ԱՐԶԻԵԱՆ
Նոյն տեղում կատարվում է անագին ընտրութիւն կտորեղէնների
ՌՈՒՍԱԿԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՖԻՐՄԱՆԵՐԻ
Պատուէրները կատարվում են բարեխղճօրէն, խիստ ճշտապահութեամբ և վերջին մօդայով։
Գիները չափից դուրս էժան են
Խնդրում ենք յարգոյ հասարակութեանը հաւոզվելու համար անձամբ այցելել։
ԱԿՕՊԵԱՆ և ԱՐԶԻԵԱՆ
(կ. չ. ու.) 20—8

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը
յայտնում է տրակտիրների տէրերին, որ, հանձայն տրակտիրներին վերաբերող կանոնադրութեան 34, 35 և 36-րդ յօդուածների, յօգուտ քաղաքի ստացվող հարկերի բաժանումը կատարող Մասնաժողովի ընտրութիւնները 1909 թ. հաւար տեղի կունենան.
Տրակտիրների համար սեպտեմբերի 26 ին
Գինետների համար սեպտեմբերի 26 ին
Գարեջրատների համար սեպտեմբերի 26 ին
Բենզինի նկուղների համար սեպտեմբերի 28 ին
Գինու նկուղների համար սեպտեմբերի 28 ին
Սրճարանների և թէյատների համար, ուր տրվում են և նախաճաշիկ և՛ տաք կերակուր սեպտեմբերի 28 ին
Իշխանատեղիների համար սեպտեմբերի 28-ին
Ուտելեղէն վաճառող խանութների համար սեպտեմբերի 28-ին
Վերոյիշեալ հիմնարկութիւնների տէրերը հրաւիրվում են ներկայ լինել Քաղաքային Վարչութեան մէջ նշանակված օրերը՝ ցերեկվայ ժամը 12 ին։
(կ. չ. ու.) 3—2

Առեւտրի եւ արդիւնաբերութեան մինիստր. տնօրինութեան հերոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
Առեւտրական Գիտութիւնների Կուրսեր
(Թիֆլիս, Միքայէլեան պրօսպ. տուն № 24|4)
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։ Դասընթացքն աւարտողներին տրվում են ատեստատներ։ Առարկաներն են. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկան), բանկային և գործարանական), 2) Առևտրական թեարանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն), 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թւաբանութիւն հաշիւի վրա, 7) Վաճառագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն)։ Առարկաներն ուսուցանվում են Արևմտեան Եւրոպայի առևտրական ակադեմիաների ծրագրով։ Ամբողջ տարվայ վճարն է 60 ր.։
Գրելու մեքենայի վրա գրելու դասեր։
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ
Զբաղմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամեն օր ժ. 10—12 և 4—7։
Համառօտ ծրագիրը և կանոնները ձրիաբար տրվում և ուղարկվում են կուրսերի շէնքում։
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝
Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(ա. օ.) 20—15

ԺԱՄԱՑՈՅՑ
եւ
Ա Ծ Ե Լ Ի
ԱՄԵՆՔԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ
ԻՐԵՐ
ՄՕՍԿՎԱՅԻ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ՊԱՀԵՍՏԸ
ՈՒՂԱՐԿՈՒՄ Է 150 իրեր մի այլ 8 ր. 95 կ.
1) Անգլիական սև պողպատէ տղամարդկանց կամ կանանց բաց ԺԱՄԱՑՈՅՑ։ Ժամացոյցի մեխանիզմը արտասահմանեան շինուածք է և պարգևատրվել է համաշխարհային ժամացոյցի ցուցահանդէսում։ Լարվում է առանց բանալիի (բեժնտուար)։ Ժամացոյցը բանում է րոպէ առ րոպէ, որի համար երաշխաւորութիւն է տրվում. 2) Տղամարդկանց կամ կանանց նորաձև պարանոցի շղթայ. 3) Գեղեցիկ տեսքի բրելօկ. 4) Ժամացոյցը գողացվելուց ազատ պահող գործիք. 5) Անգլիական լաւագոյն պողպատէ ԱԾԵԼԻ. 6) Ածելիաման. 7) Նիկելի փոքր թաս սապօնի համար. 8) Վրձին սապօնվելու համար. 9) Սապօնի փոշու արկղիկ. 10) Թաւշեայ շպարի արկղիկ. 11) Կարապի բմբուլից փնջիկ շպարվելու համար. 12) Ցանկացողներին ածելիի և իր պարագաների փոխարէն կարող ենք ուղարկել կանացի նորաձև բրօշկա և մի զոյգ պարիզեան գոհարազարդ ականջօղեր. 12—14) Տուալէտի արդուզարդարանք, բաղկացած հայելիից, սանրից և կօշիկներ կոճկելու կարթից. 15—19) Գարնիտուր, բաղկացած կրծքի 2 և մանժէտի 3 արտասահմանեան աշխատանքի զապօնկաներից «Մոդերն» ոճով, կամ թէ սրա փոխարէն կանանց սանրեր. 20) Ամերիկական գրպանի մկրատ. 21) Գրպանի դանակ. 22—23) Գրպանի մատիտ և գրիչ. 24) Ճանապարհորդական գրպանի թանաքաման. 25) Պարիզեան ստերէօսկոպ մեծացնող ապակիներով. 26—75) 50 լուսանկարչական գողտրիկ նկարներ ստերէօսկոպի համար. 76—100) 25 Carte postale բաց նամակներ գեղեցիկ դանակներով, որոնք կարող են մի ալբոմի զարդը դառնալ. 100—125) 25 լաւագոյն պօստային թուղթ. 126—150) 25 այդպիսի ծրար։ Բոլորի համար միայն 8 ր. 95 կ. Նոյն իրերը, խուլ ժամացոյցով—1 ռուբլով թանգ, այսինքն 9 ր. 96 կ., իսկ արծաթեայ խուլ ժամացոյցով միայն 16 ր. 95 կ.։
Ինչպէս տեսնում էք, սրանից էժան չէ կարող լինել։
Ուղարկվում է և վերադիր վճարով
Մրարելը ձրի։ Գործադրութիւնը օրինակելի։ Ուղարկելու համար յաւելեալ առնվում է Եւրոպական Ռուսաստան՝ 65 կ., իսկ ասիական—95 կ.։
Լաւութեան լիակատար երաշխաւորութեամբ.
ՊԱՏՈՒԷՐՆԵՐԸ ՀԱՄՑԷՆԳՐԵԼ Московскій Центральный Складъ Часовъ
Խնդրում ենք չը խառնվել վարշավեան ֆիրմաների հետ.
Москва, д. Виноградова, № 126
P. S. Փողով կամ նամակագրոշմներով գրաւական ուղարկողներին իրբև նուէր ուղարկվում է գեղեցիկ քրոց փողպատի (գալուստիկ) համար։
36—1
(կ. չ.)

Типографія „Экономія“ Ав. Мугдусіакопова С-ми

Большая Ванкская ул. № 3.